ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 355-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի բ) կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված պլանով նախատեսված միջոցառումների կատարումը և իրականացնել հսկողություն միջոցառումների կատարման նկատմամբ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

22.12.2023

X

21 դակտեմբերի 2023թ.

ք. Իջևան